



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

352

H1-84

1926

11 MAR 2010

ՆԵՐԱՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՐԻԱ

ԽՈՐՅՈՒՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳՅՈՒՂՈՒՄ

Ա. ՄԱՍ, ՊՐԱԿ 27

Պուսերեմից բարգանեմից և ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1926

352

Խ-84

13.05.2019

№ 4 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՆ

352

14-84

13513

352 Հայկական
14-84 Կոմիտասի
պատճեն

ԽՆ-2562 ՀՎ/Հ-23

13513

ԽՈՇՀՐԴԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳՅՈՒՂԱԿԱՄ

Ա. ՄԱՍ. ՊՐԱԿ 27

Թուսերենից բարգմանց Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՐԿԱԳՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1926

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆ.

Հողը գյուղա- Հոկտեմբերյան հեղաշրջումից վորոշ ժամանակ
ցիթերից հաճ- անցնելուց հետո հողի մասին հիմնական որենք
աքնից։ հրատարակվեց։ Այդ որենքի համաձայն կալվա-

ծատիրական ու վոչ-աշխատավորական հիմնարկների բոլոր հո-
ղերը գյուղացիության ձեռքն անցան։ Հեղափոխությունից ա-
ռաջ Ռուսաստանի 39 նահանգներում հողային ֆոնդը հետե-
վալ կերպ եր բաժանված։

Մասնատիրական և պետական հողերը կազմում ելին $23,7^0/0$ -ը
Գյուղացիական հողերը » $76,3^0/0$ -ը

Հեղափոխությունից հետո հողերն այսպես բաժանվեցին։

Խորհրդային տնտեսությունների, հիմնարկների ու կոլեկ-
տիվների ոգտագործության հողերը կազմեցին $3,2^0/0$ -ը
Գյուղացիության ոգտագործության հողերը » $96,8^0/0$ -ը։

Հողի մեծ մասն այժմ գտնվում է գյուղացիների ձեռքին։
Գյուղացիների ձեռքն անցած մասնատիրական հողերը Ս. Խ.
Հ. Միայն յեփրոպական մասում նախապատերազմական ոռուբ-
լով արժեն 5 միլիարդ գուկի ոռուբլի։ Բացի այդ՝ գյուղացինե-
րի ձեռքն անցան նաև կալվածատերերի անսասուններն ու ին-
վենտարը, զոր գնահատվում է 310 միլիոն ոռուբլի։

Բանկերի, գոր- Խորհրդային իշխանությունը բանկերը, գործա-
ծարանների ու ըաններն ու զավողները, ինչպես և յերկաթու-
զափողների բըռ- ղիները խլեց իրենց նախկին տերերից ու պե-
նագրավումը։ առության սեփականությունն հայտարարեց։ Սո-
ցիալիստական պետության շինարարության ուղղությամբ սա-
առաջին քայլն եր։

Բանվորներն ու գյուղացիները մեծ յեռանդով ձեռնամուխ յեղան իրենց նոր պետության շինարարության գործին Շշ-խատանք շատ կար: Թշնամին ջախջախված եր, բայց վոչնչացված չեր: Ամեն կողմից դեռ լսվում եր թշնամու ոճալին շշոցը: Նախկին սեփականատերերը, վորոնց ժամանակավորապես թողել եյին պետական ձեռնարկություններում—ինժեներներն ու պետական հիմնարկների պաշտոնյաներն, ամեն կերպ աշխատում ելին վասել խորհրդային իշխանությանը—հրաժարվում եյին աշխատել և այլն:

Քաղաքացիա- Բուրժուազիան ու նրա արբանյակները հրա- կան պատերազմ: Ժարվեցին ճանաչել խորհրդային իշխանությունը. չե վոր նրանց շատ վիրավորանք եր պատճառել: Խորհրդային իշխանության ներկայացուցիչների մասին նրանք այսպես եյին ասում: «Նրանք անորինական իշխողներ են, նրանց ժողո- վուրդը չի ընտրել, նրանք պարզապես ուժով խել են իշխա- նությունը: Նրանց պիտի տապալել ու տեղը նախկին բուր- ժուական իշխանությունը դնել»:

Բուրժուազիան խոսքից գործի անցավ: Սպաները, յուն կերները, կալվածատերերի ու գործարանատերերի վորդիները խորհրդային իշխանության դեմ զինված ապստամբություն բարձրացրին: Ռուսաստանում այս ու այն ձեռվ նրանց ոգնե- ցին մենշվարեն ու եսերները: Նրանք ոգնություն ստացան նաև արտասահմանից, վորտեղից ուղարկում եյին զենք ու զի- նահագուստեղեն:

Հին բանակը ցրված եր, վորովինետև հանուն կալվածատե- րերի ունեցվածքի գյուղացիները չեյին ուղեցել կովել: Հար- կավոր եր նոր բանակ կազմակերպել, սպառազինել նրան ու հազցնել վասից գլուխ: Հարկավոր եր գյուղացիներին բացա- տրել, թե ինչ տարբերություն կա այս նոր քաղաքացիական պատերազմի ու հին, ցարական պատերազմի միջև, և թե ին- չու գյուղացիները պիտի մասնակցեն այդ պատերազմին:

Իժպերիալիստական յերեք տարվա պատերազմից հետո նորից պատերազմելը հեշտ բան չեր: Սակայն այդ պատերազմի յելքից եր կախված հեղափոխության բախտը ինչու համար

բուրժուազիան քաղաքազիական պատերազմ բարձրացրեց, ինչ եր ուղղում նա: Այդ մասին հարցը եք Ուկրայնայի, Սիբիրի ու այն բոլոր վայրերի գյուղացիներին, վորտեղ սպիտակ գվարդիական բանակները մասցել են թեկուզ միջանի ամիս: Այդ վայրերի գյուղացիները կպատմեն ձեզ, վոր սպիտակ գվարդիայի յետեկց իրենց հողերին կրկն տիրանում ելին կալվածատերերը, իսկ հին կարգը, վոր հեղափոխությունը ար- դեն տապալել եր, վերականգնվում եր հին ձեռվ: բայց ել ավելի գաժանությամբ: Կալվածատերերը գյուղացիներից վրեժ եյին առնում իրենց հասցրած վիրավորանցի, կալվածքները այրելու, ունեցվածքը խելու համար և զաժանորեն ձաղրում եյին նրանց: Կարճ ասած՝ սպիտակ գվարդիականները կամ հականեղափոխականները, ինչպես այլ կերպ անվանում եյին նրանց, ձգտում եյին վերականգնել կապիտալիստական կարգը՝ իր ամբողջ կատարելությամբ:

Թե ի թագես Հասկանալի բան ե, վոր սպիտակ գվարդիական- սպիտակ գվար ներն այնքան ել հիտար չեյին, ինչպես կարող ե ամփառում եյին թվականը մեզ առաջին հայացքից: Նրանք շատ լավ խարել գլուզա: Գիտեյին, վոր Ռուսաստանի աշխատավոր մաս- ցիուրյանը.

Աաներն իրենց յետեկց չեյին գնա, յեթե բա- ցարձակ կերպով ասեյին, թե իրենց ծրագրի մեջ մտնում ե կա- պիտալիստական կարգի վերականգնումը: Իրենց իսկական մտա- դրությունը թագցնելու համար նրանք գյուղացիներին ասում եյին, թե կոփկ են մզում հանուն Հիմնադիր Փողովի, վոր ցրեցին բալլարկները: Իբր թե միայն Հիմնադիր Փողովի իրավունք ունի վորոշելու և սահմանելու Ռուսաստանի պետական կա- պիտարության ձեր:

«Մենք, — ասում եյին նրանք (իսկ նրանց յետեկց կրկնում մենշվարեն ու եսերները), — մենք գեմոկրատիալի կողմաներից ենք, այսինքն «ամբողջ ժողովրդի իշխանության» կողմաներից, մինչդեռ բալլարկները սահմանել են բանվոր դասակարգի ու չքավոր գյուղացիության իշխանություն»:

Պետք ե խոստովանել, վոր գյուղացիության վորոշ մասը հավատաց սպիտակ գվարդիականների քաղցր ճառերին և նրանց

հետ միասին խորհրդացյին իշխանության դեմ գնաց (թե ինչպիսի գյուղացիներ ելին ըրանք, այդ մասին կզատմենք հետո): Սակայն կյանքը շուտով ցույց տվեց, թե սպիտակ գվարդիականները վար «ամբողջ ժողովրդի իշխանության» մասին են խոսում:

Սիրիում ժողովներ եր անում Հիմնադիր Ժողովի կոմիտեն, վորի մեջ մտնում ելին մենշևիկներն ու եսերները: Այս կոմիտեն ամեն կերպ ոգնում եր խորհրդացյին իշխանության դեմ պատերազմող Կոլչակին: Ալսպիսով Կոլչակի թագավորության մեջ Հիմնադիր Ժողովի իշխանություն եր, այսպես կոչված «գեմոկրատիա»: Իսկ Մոսկվայում խորհրդացյին իշխանություն եր, բանվոր դաստիարակի ու չքավոր գյուղացիության իշխանություն:

Բայց ինչ պատահեց:

Գյուղացիներն Ահա թե ինչ, Յերբ մենշևիկների ու եսերների հետին համոզվեցին քեզ ով ե իւեց բանակի հողակերպեց և իրեն բավ սկան ուժեղ զգաց, նա ցըց Հիմնադիր Ժողովի կոմիտեն, վորին գլուխ ելին կանգնած պարոնայք մենշևիկներն ու եսերները: Կամք.

Սիրիուց հալածվելով, նրանք փախան դեպի խորհրդացյին իշխանության սահմանը՝ փրկություն գտնելու կարմիր Մոսկվայում: Իսկ Կոլչակը, վոր իրեն կոչում եր «Ռուսաստանի գերագույն կառավարիչ», զուտ միապետական կարգեր հայտարարեց:

Ահա հենց այս հանգամանքը պարզեց, վոր հեղափոխության ժամանակ կամ միայն բուրժուազիալի անսահման տիրապետության կողմը պիտի լինել, կամ բանվոր դաստիարակի անսահման տիրապետության կողմը: Գյուղացիությունը ճիշտ ուղին բռնեց և վերջնականապես խորհրդացյին իշխանության կողմն անցավ՝ ողնելով նրան կովելու սպիտակ գվարդիականների դեմ: Այս հանգամանքն ապահովեց խորհրդացյին իշխանության հաղթանակը բաղաքացիական պատերազմի մեջ, վորի շնորհիվ ել կալվածատերերի հողերն ընդմիշտ մնացին գյուղացիների ձեռքին:

Զեավորւթյան Տնտեսական ահսակետից գյուղացիությունը միակումիտեներ:

տարր չե: 1914 թվին Ռուսաստանում կային 3 միլիոն մշտական գյուղանտեսական բանվորներ և 12 միլիոն ժամանակավոր բանվորներ: Բացի դրանից, բոլոր գյուղացիների համարյա մի յերրորդը գյուղական չքավորներ պիտի համարենք, այսինքն այնպիսի անտեսություններ, վոր վոչ ձի ունին, վոչ ել կով: Այդ կարգի անտեսություններին նույնիսկ հեղափոխության ժամանակ նրանց ձեռքն անցած կալվածատիրական հողերը վոչինչ տալ չկարողացան, վորովհետև այդ հողերը մշակելու համար վոչ մի միջոց չունեցին:

Այսպիսով, հեղափոխության ժամանակ, գյուղում մի կողմից չքավոր անտեսություններ կային, մյուս կողմից՝ գյուղացիական խոշոր անտեսություններ. սրանք մեծ քանակությամբ հող, անասուններ ու գյուղատնտեսական մեջենաներ ունեցին: Կուլակների այս խումբը թեպետև քանակով մեծ չեր, բայց անտեսապես շատ ուժեղ եր: Գյուղում հենց դրանք ելին իշխում և իրենց յենթարկում չքավորներին:

Այս յերկու ծայրահեղ խմբակների միջև գտնվում են գյուղացիական միջին անտեսությունները, պարզապես կոչված միջակները: Իսկ հեղափոխությունը այս յերեք խմբակներից ում ամենաշատ բանը տվեց: Սկզբներում ամենից շատ կուլակներն ոգտվեցին: Դա հասկանալի յե: Զբավորից նրանք ավելի ուժեղ ելին, կալվածատիրական հողերը, անասուններն ու ինվենտարը առաջին հերթին նրանք խեցին: Իսկ չքավորությունը հեղափոխության սկզբի որերին վոչինչ չստացավ:

Այսպիսի յերեսությ խորհրդացյին իշխանությունը անտես չեր կարող առնել: Նա հենց նրա համար և չքավորության իշխանություն կոչվում, վորպեսզի պաշտպանի չքավորությունը: Հարկագոր եր հեղափոխություն մտցնել նաև գյուղում: Այս նպատակով խորհրդացյին իշխանությունը դեկրետ (որենք) հրատարակեց՝ գյուղերում չքավորության կոմիտեներ կազմակերպելու մասին (կրծատ ձևով դրանք կոչվում են կոմեծ): Զբավորության կոմիտեները պիտի համախմբելին իրենց շուրջը սակագահող գյուղացիներին ու բատրակներին և պայքարելին

կուլակների դեմ: Ոգտվելով խորհրդային իշխանության պաշտպանությունից, չքափորության կոմիտեները խուս եյին կուլակներից հողմ ու գյուղատնտեսական ինվենտարը և հանձնում շքափորներին:

Ենչու կուլակ: Ենք սպիտակ գվարդիական կողմն անցած անունու մասին:

Մինչև զոկտեմբերյան հեղաշրջումը վողջ գյուղացիությունն անխտիր բայլշիկների ու խորհրդային իշխանության կողմն եր: Կուլակները մտածում եյին ոգտվել կալվածառերերի հաշվին ու ընդլայնել իրենց տնտեսությունը: Ահա

թե ինչու բայլշիկների կոչը՝ «ամբողջ հողը գյուղացիներին»՝ պաշտպանեց վողջ գյուղացիությունն առանց խորության: Իսկ չքափորության կոմիտեներ հաստատվելուց հետո, յերբ գյուղական չքափորությունը կուլակներին բավականին սեղմեց, կուլակները տեսան, վոր իրենց գործը գլուխ չի դալիս, ուստի և թեքվեցին սպիտակ գվարդիականների կողմը, հաճախ գրավելով իրենց յետերից անզիտակից ու հետամնաց չքափորներին:

Այնուամենայնիվ, քաղաքացիական պատերազմի ընթացքում միջին ու չքափոր գյուղացիները, շատ քիչ բացառությամբ, հաստատուն կերպով կանգնած եյին խորհրդային իշխանության կողմը և չխախտեցին բանվոր դաստիարակի հետունեցած միությունը:

Խորհրդային իշխանությունն ու գյուղացիական պատերազմի ընթացքում մասնակի առաջնորդ բաղադրական պատերազմի ընթացքում:

Խորհրդային իշխանությունն իր կողմից ամեն կերպ ձգտում եր թեթևացնել գյուղացիության ծանր դրությունը, ձից ե, սկզբում շատ բան նա չկարողացավ տալ: Ժամանակը դաժան եր: Դոնի ավագանում, ուր ածուխ եր արտադրվում, կովկասում, ուր նավթահանքերըն են, թուրքեստանում, ուր բարբակն ե բուսնում, տեր ու անորենը սպիտակ գվարդիականներն եյին: Յերկաթուղիները, գործարաններն ու զավողները մնացել եյին առանց ածուխի ու նավթի: Վորպես վառելանցութ սահպատճ փալտ եյին գործ ածում: Տեկստիլ գործարանները մնացել եյին առանց հում նյութի: Ապրանք քիչ եր արտադրվում, իսկ այն փոքր քանա-

կությունն ել, վոր արտադրում ելին այդ ժամանակ պետական ձեռնարկությունները, առաջին հերթին պետք եր Կարմիր բանակին տալ: Այդ ժամանակ կարմիր բանակն արդեն մոտ 3 միլիոն մարդ եյին հաշվում: Պետք եր սպառազինել ու հագունել կարմիր բանակին, վորովհետեւ քաղաքացիական պատերազմի հաղթանակը դրանից եր կախված: Քաղաքացիական պատերազմի հաղթանակն ամենազլիսավոր խնդիրն եր, վորովհետեւ դրանից եր կախված, թե Ռուսաստանում բանվորագյուղացիական իշխանություն ելինելու, թե կալվածառերերի ու կապիտալիստների իշխանություն: Սպիտակ գվարդիականներին ջախջախելու համար հարկավոր եր ձեռք առնել ամենահաստատուն ու վճռական միջոցներ, կանգ չառնել վոչ մի բանի գեմ և հնարավոր յեղած ամեն բան անել:

Խորհրդային իշխանությունն այդպես ել արագ: Այժմ արդեն գիտենք, վոր այդ քաղաքականությունը ճիշտ եր ու լավ հետեանքներ տվեց: յերկրում իշխանությունը մենք մեր ձեռքում պահեցինք, և Ռուսաստանում ալևս բուրժուական իշխանություն չի լինի:

Հասկանալի յե, վոր այդպիսի պայմաններում խոլհրդային իշխանությունը գյուղացուն շատ բան տալ չեր կարուց: Այն ժամանակ բոլորն ել քաղցած եյին: Քաղցներում բանվորները մի ֆունտ պարենբաժին եյին ստանում, իսկ Լենին գրադի բանվորները, վորոնց յերախտիքը հեղափոխության հանդեպ շատ մեծ ե, յերեմն այդ մեկ ֆունտ պարենբաժինն ել չեյին ստանում: Քաղցած ու մերկ, նրանք կանգնում եյին դադաների առջե ու կարմիր բանակի համար գնդակներ, հրացաններ ու ռումբեր պատրաստում: Այնուամենայնիվ, այդ համատարած աղքատության ժամանակ 1918-19 թվականին խորհրդային իշխանությունը գյուղին մեկ միլիոն փութ նավթ տվեց, մեկ միլիոն փութ շաքար, $2\frac{1}{2}$ միլիոն փութ աղ և այլն: 1920-21 թվին $6\frac{1}{2}$ միլիոն փութ նավթ տվեց, $2\frac{1}{2}$ միլիոն փութ շաքար ու $10\frac{1}{2}$ միլիոն փութ աղ:

Իհարկե, այդ բոլորը գյուղի համար շատ քիչ եր, բայց վորքան ել ցանկանար, խորհրդային իշխանությունն այդ ժամանակ ավելի չեր կարող տալ:

Պարենմասնաւ-
տրումը լիվ ա-
մեկն եր, վոր անհրաժեշտ եր հեղափոխու-
գաւառնեպուրը.

Պարենմասնաւ-
տրումի չեր կարելի բանակը կերակրել Առանց դրան քա-
ղաքների բանվորները, վոր առանց այն ել կիսաքաղց ելին ապ-
րում, ոսկամանի կղատապարտվելին։ Զպիտի մոռանալ, վոր
ամենահացառատ վայրերը՝ Ուկրայնան, Կովկասն ու Սիբիրը
կտրված ելին Խոհերդային Ռուսաստանից, և պարենմասնաւ-
տրումի ամբողջ ծանրությունը ընկել եր կենտրոնական նահանգների
վրա։ Սակայն այստեղ ևս խորհրդային իշխանությունը մնաց
վորպես չքավորության իշխանություն։ պարենմասնաւ-
տրումի միայն գյուղի կուլակների վրա, սրանք պետու-
թյանը տալիս ելին իրենց ստացած հացի մեծ մասը, այնինչ գյու-
ղացիության ավելի չքավոր մասը քիչ եր տալիս։ Իսկ բոլորովին
չքավորները պարենմասնաւ-
տրումից մի անդամայն ազատված ելին։

Պարենմասնաւ-
տրումի պատճառով արգելվում եր ազատ
առեսուրը, Ընդհանուր քաղցի ու պակասության ժամանակ հացի
ազատ առեսուրը մի նշանակություն կարող եր միայն ունե-
նալ, վոր գյուղական կուլակները, մեծ պաշարներ ունենալով,
քաղցի հետեւանքով անխիղճ չարաշահությամբ պիտի զբաղվելին։
«Քաղցած յերկրում հացի ազատ առեսուր, — գրում եր այն ժա-
մանակ ընկ. Լենինը, — նշանակում ե հարուստների հաղթանակ
ընդդեմ աղքատների, վորովհետեւ հարուստները կզնեն հացը
նույնիսկ չափազանց բարձր գնով։ Իսկ աղքատները վոչ մի բան
չեն կարող ձեռք բերել։ Ազատ առեսուր նշանակում ե հարուստ-
ների համար շահվելու ազատություն, իսկ աղքատների համար՝
մեռնելու ազատություն։ Հացի ազատ առեսուրը կյանքը կր-
շրջի դեպի յետ, դեպի կապիտալիստների աիրապետությունն
ու անսահման իշխանությունը»։

Խուսիրգային իւ-
սանուրյան վե-
րաբերմունքը
զեպի միջին
գյուղացին.

Գյուղում չքավորության կոմիտեներն իրենց
գործն արին, — կուլակի հասույթները նրանք
միքիչ կրծատեցին։ 1917 թվին 4 և ավելի ձե-
ռնեցող գյուղացիական տնտեսությունները
կազմում ելին բոլոր տնտեսությունների 20%՝ իսկ 1919 թվին

արգեն 1/2% ը միայն։ 4 ու ավելի կով ունեցող տնտեսու-
թյունների թիվը նույնական 20% ից իջավ մինչև 10% ի, Մյուս
կողմից չքավորների վիճակը սիքիչ բարձրացավ։ 1917 թվին
ձի չունեցող տնտեսությունները կազմում ելին 28%, իսկ
1919 թվին 25% միայն։ Կով չունեցող տնտեսությունների
թիվը իջավ 18% ից մինչև 15%։ Այդպիսով միջին գյուղա-
ցիության խմբակն ավելացավ իհաշիվ ծայրահեղ յերկու խմբակ-
ների։

Գյուղում չքավորության կոմիտեներն արգեն անելիք չու-
նելին և 1919 թվի սկզբին վերացվեցին։ Գյուղն սկսեց կա-
ռավարել կանոնավոր կերպով լնարված խորհուրդը, վորի կազմի
մեջ մասնում ելին միջին գյուղացիներն ու չքավորները։ Իսկ
կուլակները, վոր վարձու աշխատանք են գործադրում, մինչև
այժմ ել խորհրդի մեջ ընտրվելու իրավունք չունեն որենքով։
«Միջին գյուղացիները, — ասում եր այն ժամանակ ընկ. Եւ-
նինը — խորհրդային իշխանության թշնամիները չեն, այլ նրա
բարեկամները։ միջին գյուղացիության հետ համաձայնության
գալը հնարավոր ե ու անհրաժեշտ»։

Ն Ե Պ Բ Յ
ա ն ց ն ե ւ ը
բաղաքացիական պատերազմի ժամանակ պա-
րենմասնաւ-
տրումն ու ազատ առեսուրի արգե-
լումը, վորպես ծայրահեղ միջոցներ, հարկավոր ելին։ 1921 թ.
սկզբին քաղաքացիական պատերազմը վերջացավ։ Խորհրդային
իշխանությունը բոլոր ճակատներում հաղթող հանդիսացավ,
քաղաքացիական պատերազմը վերջանալուց անմիջապես հետո
խորհրդային իշխանությունն առաջադրեց այն հարցը, թե ան-
հրաժեշտ ե արդյոք այժմ պարենմասնաւ-
տրումը շարունակել, և
չի կարելի արդյոք այն փոխարինել մի այլ, գյուղացիության
համար ավելի թեթև տուրքով։

Կոմմունիստական կուսակցության X հաւագումարը 1921թ.
մարտ ամսին, այսինքն քաղաքացիական պատերազմը վերջա-
նալիս այդ հարցը նույնպես քննության առավ և վճռեց պա-
րենմասնաւ-
տրումը փոխարինել պարենհարկսվ ու իրավունք տալ

գյուղացիությանը հացի և գյուղացիական տնտեսության այլ մթերքների ավելցուկներն ազատ կերպով վաճառելու:

Յեթե քաղաքացիական պատերազմի տարիներին բանվոր ների ու գյուղացիների հիմական անելիքն այն եր, վոր ինչ կերպ ել լինի իրենց ձեռքին պահեն իշխանությունը, ապա քաղաքացիական պատերազմից անմիջապես հետո նրանց առջե մի այլ, վոչ պակաս կարենոր ու պակաս դժվարին խնդիր դրվեց, այն եւ փերականգնել քայլայված գյուղացիական տնտեսությունը:

Ծուսաստանում, —ասում եյին կոմմունիստները, — ուր գյուղացիությունը ազգաբնակության մեծ մասն ե կազմում, խոշոր արդյունաբերության զարգացումն անհնարին ե առանց գյուղական տնտեսության վերականգնման: Իսկ վորպեսզի վերականգնվի այդ տնտեսությունը, մասր գյուղացու համար այնպիսի պայմաններ պիտի ստեղծել, վոր նա հնարավորություն ունենա վերականգնել ու ընդլայնել իր տնտեսությունը: Այդ պիսի պայմաններ ստեղծելու համար ել հաստատվեց պարենհարկը, և ընդլայնվեց ազատ առևտուրը:

Ն Ե Պ. Այդ ժամանակից, այն ե՛ 1921 թվի ապրիլ ամսից սկսվում ե այսպես կոչված նոր տնտեսական քաղաքականությունը:

Նոր տնտեսական քաղաքականության շրջանում գյուղացիական տնտեսությունն սկսում ե արագ կերպով վերականգնվել: Ճիշտ ե, առաջին տարին վոչ մի հետեանք չտվեց: Այդ ժամանակ Խորհրդային Ծուսաստանին մեծ դժբախտություն պատահեց, վոր ամենքն ել դեռ հիշում են: Անբերրիությունն ընդգրկեց 30 նահանգ և խիստ քայլայեց գյուղացիական տըստեսությունը: Խորհրդային իշխանությունը լարեց իր վերջին ուժերն ու ոգնության հասավ գյուղացիությանը: Հարյուր հազարավոր գյուղացի լերեխաներ բերում ելին քաղաքները ու տեղավորում գործարաններին ու զավոդներին կից կազմակերպված հատուկ մանկասների մեջ: Բանվորներն ու ծառայողները կարում եյին իրենց չնշին ոռնկից վերջին կոպեկները, վորպեսզի կերակրեն գյուղացի լերեխաներին ու վրկեն նրանց սովամահությունից:

Գյուղական տնտեսության աճումը 1923 թվին վոչ մի կասկածի յենթակա չի: Դա խոստովանեցին նույնիսկ բութուական զիտնականները, վորոնք ամեն կերպ ձգտում ելին նսեմացնել խորհրդային իշխանության հաջողությունները:

Միքանի թվեր կբերենք, վորոնք ցույց կտան, թե՝ 1922 թվի համեմատությամբ՝ 1923 թվին ցանքսերի տարածությունը վորքան ե ավելացել:

Աշնանացան հաճար . . .	ցանված ե 21 %	ավելի
Գարնանացան ցորեն . . .	» 44 %	»
Վարսակ	» 22,5 %	»
Գարի	» 73 %	»
Կարտոֆիլ	» 28 %	»

Այդ տարի ավելացավ նաև տեխնիկական կուլտուրաների՝ շաքարածակնդեղի, կտավհատի, կանեփի ու բամբակի ցանքսերի տարածությունը: Կանեփի ցանքսերի տարածությունը նույնիսկ նախապատերազմականից ել անց կացավ: Ավելացավ նույնպես անասունների քանակը:

Այդպիսի հաջողություններ կան նաև քաղաքային արդյունաբերության մեջ: Նոր տնտեսական քաղաքականությունն սկսվելուց հետո անընդհատ աճում ե քարածուխի ու նավթի արտադրությունը, չուգունի ձուլումը և բամբակի մանվածքի ու բամբակի կտորեղինի պատրաստումը:

Միանգաման ակներեւ ե, թե ճիշտ ե այն ուղին, վոր 1921 թվից սկսած բռնել են կոմմունիստական կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը: Այդ ուղին տանում ե դեպի տնտեսության վերականգնումը, նրա հարստության աճումն ու բոլոր աշխատավորների բարեկեցության բարձրացումը:

Լարված ուշադրությամբ խորհրդային իշխանությունը հետևում ե, վոր 1917 թ. հոկտեմբերին բանվորների ու գյուղացիների միջև կնքված դաշինքը չքանդվի, վորպեսզի ամի ու ամբապնդվի բանվոր դասակարգի կապը գյուղացիության հետ:

Այս մասին ընկ. կենինը դեռ իր կենդանի ժամանակ շատ ե խոսել ու գրել: Վաղիմիքը իլլիչն իր վերջին հողվածների ու ձառերի մեջ մեզ պատվիրում ե ամբապնդել մերձեցումը գյու-

զացիության հետ։ Կուսակցությունն ու խորհրդավին իշխանությունը սրբությամբ կատարում են իրենց ուսուցչի պատգամները։

Հացի գինը յև 1923 թվի աշնանը հացի ու գյուղական տընօմկրատը։ տեսության ուրիշ մթերքների գինը խիստ ընկավ, իսկ բաղաքային ապրանքների գինը մնաց բարձր։ Հանկանալի յէ, վոր այս հանգամանքը գյուղացիական տնտեսության վրա վատ պիտի անդրադառնար։ Խորհրդային իշխանությունը յեռանդուն միջոցներ ձեռք առավ, վորպեսզի համարեցնի գները։

Դա հեշտ բան չեր, Յերկրում չափազանց շատ հաց կար, պետք եր կազմակերպել հացը արտասահման արտահանելու գործը։ Պատերազմի ու հեղափոխության ժամանակ ամերիկական հացը մեր հացը դուրս եր վանել արտասահմանայանց շուկաներից։ հարկավոր եր մեր հացի համար նորից շուկա նվաճել։ Մեծ դժվարությամբ հաջողվեց այդ բանն անել։ Մենք սկսեցինք արտասահման հաց արտահանել։ Հացի արտահանության ու խորհրդային իշխանության ձեռք առած այլ միջոցների շնորհիվ հացի գինը բարձրացավ։ 1923 թ. ոգոստոսի 1-ին մի փութ հացի միջին գինն ամբողջ Միության մեջ 51 կոպեկ եր, իսկ 1924 թ. ոգոստոսի 1-ին մի փութ հացի միջին գինը դարձավ 1 ռուբլի։ Այսպիսով հացի գինը համարյալ երկու անգամ բարձրացավ։ Միաժամանակ բաղաքային արդյունաբերության բոլոր ապրանքների գներն իջեցրին, հատկապես գյուղացիական ապրանքների, ինչպես են՝ աղը, շաքարը, նովթը, չիթը և այլն։

Հաւկերք։ Խորհրդային իշխանությունը մեծ աշխատանք է կատարել նաև գյուղացիությունից հարկ առնելու գործի նկատմամբ։ Այդ հարցը քննության առավ կոմմունիստական կուսակցության XII համագումարը 1913 թվի ապրիլին։ Այդ հարցի մասին համագումարը բանաձև ընդունեց, ուր ասված ե, թե «հարկերի չափը սահմանելու ժամանակ խորհրդային իշխանությունը պիտի զեկավարվի գյուղական տնտեսության զարգացման ու բարձրացման շահերով, ճշտությամբ գնահատելով գյու-

ղացիական տնտեսության իսկական վճարունակությունը, ինչպես ամբողջությամբ, այսպես և առանձին շրջաններով վերցրած։ 420 միլիոն ռուբլու չափ հարկ սահմանվեց, այդպիսով խորհրդային իշխանությունը գյուղացուց վերցնում եր այդ թվին գյուղատնտեսական բոլոր մթերքների արժեքի մոտ $12^0/0$ ը, այնինչ ցարական կառավարությունը վերցնում եր մինչև $20^0/0$ ։

XII համագումարից քիչ ժամանակ հետո հրատարակվեց միասնական գյուղատնտեսական հարկի որենքը, վորն ուժի մեջ մտավ 1923 թ. մայիսի 10-ից։ Առաջներում հավաքվող բազմազան հարկի փոխարեն (միասնական պարենհարկ, աշխատավորական փոխադրական հարկ, առամական հարկ և այլն), հիմա ունենք միասնական գյուղատնտեսական հարկ։

Դրամական ուն. 1914 թվից սկսած, համարյա 10 տարի Ռուսությունը։

Սաստանում լրջանառության մեջ եյին թղթադրամները։ Արդեն 1915 թվի վերջին զրանք սկսեցին մեծ չափով կորցնել իրենց արժեքը, թղթադրամների արժեքազրկությունից գյուղացիությունը շատ բան կորցրեց։ Վերջին տարիներս թղթադրամն որեցոր արժեքազրկ եր դառնում, և գյուղացիության կորուստներն ամենաբարձր չափերի հասան։ Խորհրդային իշխանությունը նկատի առնելով տև հանգամանքը, հենց վոր հնարավոր յեղավ, թղթադրամները փոխարինեց հաստատուն ու կայուն դրամներով։ Այդ հսկայական ու դժվարին գործն այժմ համարյա վերջացել եւ։

Գյուղատնտեսա- Միջին ու չքավոր գյուղացին լեռբեմն կարձկան վարկ։ Ժամանակով փողի կարիք ե զգում, վորպեսզի կարողանա բարելավել իր տնտեսությունը։ Փող ճարելու համար նա ստիպված գյուղական կուլակին ե դիմում, վորն ոգտվում ե հանգամանքից, վորպեսզի ստրկացնի գյուղացուն։ 1924 թ. գարնանը պետությունը հիմնեց գյուղատնտեսական բանկ։ Այդ բանկը նպատակ ե դրել գյուղացիներին վարկ տալ իրենց տնտեսական կարիքների համար։ Այդ բանի համար պետությունը բաց ե թողել հարկավոր գումար։

Այսպիսով պետությունն ոգնում ե միջին ու չքավոր գյուղացիներին՝ կովելու կուլակների բռնության դեմ։

Կոռագերացիա. Բացի այդ՝ պետությունը ձգտում է ոգնել գյուղացուն՝ ազատագրվելու վաճառականից ու առևտրականից։ Այդ նպատակով գյուղերում կազմակերպվում են ինչպես սպառողական, այնպես և գյուղատնտեսական մթերքներ վաճառող ու վերամշակող կոռագերատիվներ։ Այն ոգուար, վոր վաճառականն ու առևտրականը շահում են գյուղացուց, կարող ե մնալ և պիտի մնա գյուղացու տնտեսության մեջ։ Կազմակերպվում են նաև արտադրական կոռագերատիվներ, ինչպես, որինսկ, Կոսվիատակենտրոնը (Լինոցենտր) և այլն։ Այս բոլոր կոռագերատիվներին կառավարությունը մեծ գումարներ ե բաց թողնում։

1924 թվի աճ. Ցարական կառավարությունը դարերով գյուղերի ու բնակչությունը դացիությանը խափարի ու տգիտության մեջ եր պահել ՀՀ դարում ուսւա գյուղացին հողը մշակում եր համարյա նույն միջոցներով, ինչ վոր միջանի հարյուր տարի սրա նից առաջ։ Դրանով ել բացատրվում ե այն հանգամանքը, վոր մուսաստանում այնպես հաճախակի յե պատահում անբերը ություն։ Խորհրդային իշխանությունը յերեք տարվա խաղաղ տնտեսական աշխատանքի ընթացքում դեռ չկարողացավ վոչ ինչ անել, վորպեսզի ընդմիջու վերացնի անբերը իությունը։

1924 թվին մի շարք միջոցներ են նախորոշվել անբերը իության դեմ կռվելու համար։ Այդ միջոցները 5 տարում պիտի իրադրվեն և խորհրդային պետության վրա նստելու յեն 260 միլիոն ռուբլի վոսկով։

Այդ միջոցները, ինչպես արդեն ասացինք, 5 տարում պիտի իրադրվեն։ այդ միջոցներն են. շատ լավ պիտի կազմակերպել գյուղական տնտեսությունը, մշակել սերմացան, ստեղծել հողի մշակման նոր ձևեր ու բազմադաշտ սիստեմ և այլն։ Բացի այդ՝ անմիջական ոգնություն ցույց տրվեց անբերը իության շրջանների ազգաբնակությանը։ Պետությունն ալդ գործին հատկացրեց 70 միլ. ռուբլի, վորից 40 միլ. ռուբլին քաղցող ազգաբնակությունը կերակրելու և ցանքսեր անելու համար, 14 միլ. ռ. հասարակական աշխատանքներ կազմակերպելու համար, 8 միլիոնը՝ յերեխաներին կերակրելու և 8 միլիոնն ել գյուղացիներին վարկ տալու՝ անասուններ գնելու համար։

Անբերը իության շրջաններում կուլակները գյուղացիներից շատ եժան անասուններ եյին գնում։ Դա նշանակում եր, վոր գյուղացիական տնտեսությունը վերջնականապես քայլացավում ե, վորովհետեւ առանց անասունի գյուղացին իր հողը մշակել չի կարող։ Անասուններ գնելու համար բաց թողված վարկի նպատակն եր՝ ոգնել գյուղացուն դժվար ըուղիներին և հնարավորություն տալ դիմանալու մինչև հաջորդ բերքը։

1924 թվի անբերը իությունը մեզ վոչ մի քայլացավում չպատճառեց։ Անբերը շրջաններին սերմացվով կառավարությունը կատարելապես ապահովեց, գյուղացիները վոչ միայն պահեցին իրենց նախկին ցանքսաշերտերը, այլև բավականին ընդլայնեցին այս։ Վորպեսզի սերմացուն կանոնավոր կերպով տեղ հասներ, ու գյուղացիներին ցույց տրվելիք ոգնությունը կանոնավոր կատարվեր, անբերը շրջանները մեկնեց խորհրդային կառավարության զլուխ Ալեքսեյ Խվանովիչ Ռիկովը։

«Խորհրդային իշխանության 7 տարին
ու գյուղացիությունը»:

Համ Մ. Պավլովի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ.

Հաստաված ե ԿԵՆԵՐԵԿԱՆ Գործադիր Կոմիտեի կողմից
1925 թ. մարտի 16-ին.

Գյուղական խորհուրդը, իշխանության մարմին հանդիսաւալով իր գտնված վայրի աահմաններում, ունի հետեւյալ գլխավոր խնդիրները. գյուղացիական տնտեսության բարձրացումը, պայքար տգիտության, խավարի, հիվանդությունների և գյուղական կյանքի այլ թերությունների դեմ. աշխատավոր բնակչության իրավունքների պաշտպանությունը՝ բանվորների և գյուղացիների միության հիման վրա. վորքան կարելի յեճիշտ և լիակատար գործադրությունը բանվորագյուղացիական կառավարության որենքների, վորոնց նպատակն ե աշխատավորների կյանքի բարվոքումը. լայն չափերով գյուղացի տղամարդկանց և կանանց զբավելը պետությունը կառավարելու և պետական ապահովածը բարելավելու գործի մեջ. Հիշյալ նպատակներով գյուղական խորհուրդները կազմակերպվում են հետեւյալ հիմունքներով.

I. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1. Գյուղական խորհուրդը բնում ե մշակում ե գյուղական վայրերի կյանքի ու տնտեսության շինարարության վերաբերյալ բոլոր խնդիրները և իր վճիռներն ի կատար ե ածում սահմանված կարգով:

2. Իր իրավունքներն իրականացնելու և իր վրա դրված պարտականությունները կատարելու կարգով գյուղական խորհուրդը

ա. պաշտպանում ե գյուղական վայրերում ապրող գյուղացիների, բանվորների, մշակների՝ աղամարդկանց և կանանց իրավունքները.

բ. հոգ ե տանում գյուղի բոլոր աշխատավոր բնակչության կուլտուրական կենցաղի բարվոքման մասին.

գ. աշակեցում ե աշխատավոր բնակչության փոխագարձումության և կոռպերացիաներ կազմակերպելու գործին.

դ. կարուկ պայքար ե մղում խավարի, տգիտության, գուենկության, պետական գույքի հափշտակության, կաշառակերության, վաշխառության, սորկացուցիչ գործարքների և այլ որինազնցությունների դեմ.

ե. հսկում ե որենքների գործադրության վրա և կառաւում ե բանվորագյուղացիական կառավարության վերադասմարմինների կարգադրությունները.

զ. միավորում ե գյուղամուրհրդին յենթակա և նրա սպասարկած վայրում գտնվող բոլոր խորհրդային կազմակերպությունների գործունելությունը:

3. գյուղական խորհուրդը միջոցներ ե ձեռք առնում բոլոր աշխատավոր բնակչությունը տեղական կյանքի շինարարության գործի մեջ քաշելու համար, վորպեսզի գյուղացի տղամարդիկ և կանայք կարողանան մասնակցել իրենց գյուղացիական գործերը կառավարելու մեջ:

4. Այս նպատակով գյուղական խորհուրդը

ա. գումարում ե բնակիչների ընդհանուր ժողովներ.

բ. հայտարարում և բացատրում ե բանվորագյուղացիական կառավարության որենքներն ու իշխանության կենտրոնական ու տեղական մարմինների կարգադրությունները.

շ. անհրաժեշտ դեպքերում հանձնաժողովներ ե կազմում և գանազան հանձնարարություններ ե անում առանձին քաղաքացիների և քաղաքացիների խմբերի.

դ. աշակեցում ե կոռպերատիվների և այլ կազմակերպությունների, վորոնց նպատակն ե գյուղացիական կյանքի և գյուղատնտեսության պայմանների բարելավումը.

ե. կատարում ե բնակիչների ընդհանուր ժողովների որինական վորոշումները.

զ. անհրաժեշտ դեպքերում նեղկայացնում ե բարձրագույն

առ յաններին բնակիչների ընդհանուր ժողովների բոլոր վորոշումները, նրանց ցանկություններն ու խնդիրները.

է. հաշիվ և տալիս բնակիչներին իր գործունելության և իրեն վրա գրված հանձնարարությունների կատարման մասին։

Ֆ. Գյուղական խորհրդի բոլոր գորոշումներն ու կարգությունները, վոր չեն հակասում գործող որենքներին, պիտի գործադրվեն նրա գոտնված վալրի սահմաններում։

Ե. Գյուղական խորհուրդը հաշվետու յե պատշաճ գավառական գործադրի կոմիտեի առաջ։

Ա. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Շ. Կառավարչության և հեղափոխական իրավակարգի պահպանության վերաբերմամբ գյուղական խորհրդի վրա դըրվում ե.

Ա. աջակցություն ընտրական հանձնաժողովներին ընտրական ցուցակներ կազմելու և ստուգելու գործում, այլ և այդցուցակներից հանելու այն անձանց, վորոնք Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրության համաձայն ընտրական իրավունք չեն վայելում։

Բ. պայքար հանցագործությանց դեմ (գաղտնի ողեգործության, անասուններ գողանալու, ինքնագլուխ անտառահատության, դասալքության, սրիկայության և այլ հանցանքների) գործող որենքների հիման վրա.

Գ. հսկողություն իշխանության կենտրոնական և տեղական մարմինների բոլոր կարգադրությունների կատարման վրա և գալառակային գործադրի կոմիտեի այդ կարգադրություններին հակառակելու դեպքերի մասին տեղեկություն տալը։

Դ. հանցագործություններ յերեան հանելիս բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնելը, մինչեւ իսկ պատասխանատվության յենթակա անձանց ձերբակալելով, հայտնելով այդ մասին անհապաղ գավառակային գործադրի կոմիտեյին։

Ե. հսկողություն յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցոց անջատելուն վերաբերյալ որենքների կանոնավոր կիրարկության վրա։

Զ. հսկողություն ընկերությունների, ժողովների և հրա-

պարակական հանդեսների վերաբերմամբ սահմանված կանոնների կատարման վրա։

Է. Գյավառակային գործադրի կոմիտեյին ստրկացուցիչ գործարքներ կնքելու դեպքերի մասին հաղորդելը՝ այդպիսի գործարքները սահմանված կարգով լուծելու և հանցագործներին պատասխանատվության յենթարկելու համար։

Ծ. բնակչությանը առաջ քաշել պայքարելու ամարերային աղետների դեմ, մասնավորապես անտառների հրդեհների, բույսերի մնասատուների դեմ և այլն։

Թ. իշխանության վերադաս մարմինների հատուկ կարգադրությամբ յերկաթուղիները, փոստ-հեռագրական, հեռախոսի և ելեկտրական ցանցերը պահպանելը։

Ժ. հոգատարություն փոստային հաղորդակցության կազմակերպության մասին և ամեն կերպ նրան աջակցելը։

Ճ. բնակիչներին անհրաժեշտ վկայականներ տալը։

ԺԲ. բնակիչներից ամեն տեսակ դիմումներ ընդունելն ու քննելը և իր յեղբակացություններով հանդերձ ընթացք տալն այն խնդիրներին, վոր գյուղական խորհրդի քննության յենթակա չեն։

ԺԳ. Գյավառակային գործադրի կոմիտեյին պարտադիր վորոշումներ խախտելու համար վարչական պատիժներ նշանակելու առաջարկություն անելը։

ԺԴ. գյուղական կատարածուների ցուցակներ նախագծելը հերթականության կարգով և նրանց գործունեյության ղեկավարությունը։

ԺԵ. քաղաքացիական վիճակի ակտերի տոմարագրությունը որենքով վորոշված սահմաններում։

ԺԳ. պատշաճ դեպքերում անձանց և գույքի խնամակալների և հոգաբարձուների ընտրություն։

ԺԷ. ստորագրությունների, այլ և պայմանագրերի ու գործադրեների վավերացումը՝ այդ մասին գոյություն ունեցող հատուկ որենքների հիման վրա և այդ որենքների սահմաններում։

ԺԸ. բնակչության հաշվառությունը սահմանված ձեռվ և նորեկների տոմարագրությունը։

Ժթ. Բոլոր պաշտոնական անձանց և իշխանության մարմիններին աջակցություն ցույց տալը.

ի. Կառավարչության և հեղափոխական իրավակարգի պահպանության վերաբերյալ բոլոր մատնանշված միջոցները գործադրելիս գյուղական խորհուրդն իրավունք ունի աջակցություն պահանջելու բնակչությունից և միլիցիայից, դիմելով գավառակային գործադիր կոմիտեյին կամ գավառակային միլիցիային.

8. Հողային գործի, տնտեսության, առևտուրի և բարեկտրության վերաբերմամբ գյուղական խորհուրդը

ա. միջոցներ ե ձեռք առնում գյուղատնտեսության բարվոքված յեղանակներ կիրարկելու համար, այլ և լսում ե ագրոնոմիական հիմնարկությունների գեկուցումները.

բ. աջակցում ե հավաքական տնտեսությունների կազմակերպությանն ու զարգացմանը և ոգնում ու ոժանդակում ե այդ աշխատանքը կատարող մարմիններին.

գ. կազմակերպում ե գյուղատնտեսական գործիքներ վարձու տալու, զուգավորման, հացահատիկներ զտելու, անասնաբուժական և այլ կայաններ, այլ և գործիքներ նորոգելու արհեստանոցներ և հոգ ե տանում այդպիսի արհեստանոցներ ու կայաններ բանալու մասին.

դ. աջակցում ե ագրոնոմիայի, հողաշինարարության, անտառային և անասնաբուժության պաշտոնյաներին՝ իրենց գործունեյության ընթացքում.

ե. ղեկավարում ե իր սպասարկած վայրի սահմաններում սերմացու համբարելու գործը և սերմանման կամպանիաները.

զ. ղեկավարում ե սերմացուի տեղական ֆոնդեր կազմակերպելու գործը և միջնորդում ե սերմացուի վորսատվության մասին.

է. նախազգուշության միջոցներ ե ձեռք առնում անառունների հիվանդությունների տարածման դեմ (կարգադրություններ ե անում հիվանդացած անասուններին առանձնացնելու, անասնաբույժներ հրավիրելու, վարակիչ հիվանդություններից սատկած անասուններին թաղելու մասին և այլն).

ը. հետեւում ե, վոր կատարվեն բնակչության կարիքների համար փայտեղեն բաց թողնելու կանոնները.

Թ. մասնակցում ե բնակչությանը՝ կենտրոնական իշխանության հողային վեճերի քննությանը՝ կենտրոնական իշխանության այդ մասին հրատարակած հատուկ հրահանգների հիման վրա.

Ժ. աջակցում ե ամեն տեսակ կողպերատիվ կազմակերպությունների զարգացմանն ու գործունեյությանը.

Ժա. ղեկավարում ե գյուղական խորհրդի տրամադրության տակ գտնվող ձեռնարկությունները (զարբնոցները, ջրաղացները և այլն).

ԺԲ. Հի թույլ տալիս առանց պատենտի առևտուր անելը.

ԺԳ. Հի թույլ տալիս հրազնանյութերի, վոգելից ըմպելիների առևտուր անել՝ առանց այդ մասին սահմանված հատուկ կանոններին հետեւելու.

ԺԴ. Բարեկարգ վիճակի մեջ ե պահում տեղական, գյուղական նշանակություն ունեցող ճանապարհներն ու կամուրջները, այլ և հսկում ե գավառակային, գավառային և պետական նշանակություն ունեցող ճանապարհների և կամուրջների բարեկարգության վրա.

ԺԵ. հսկում ե շինարարական և հրդեհների առաջն առնելու կանոնների կիրարկության վրա.

ԺԶ. կազմակերպում ե հրդեհների առաջն առնելու գործը և հետեւում ե, վոր բնակչությունների դեմ մաքառելու վերաբերմամբ իրենց պարտականությունները կատարեն.

ԺԷ. կազմակերպում ե ոգնություն անտառների հրդեհները հանգնելու համար.

ԺԸ. հսկում ե գյուղերի սանիտարական վիճակի վրա և միջոցներ ե ձեռք առնում սանիտարական պայմանները բարելավելու համար.

ԺԹ. տուժարագրում ե հողի վարձակալության պայմանագրերը և հետեւում ե, վոր կնքված պայմանագրերը համապատասխան լինեն գոյություն ունեցող որենքներին:

9. Ֆինանսահարկային գործի վերաբերմամբ գյուղական խորհուրդը

ա. կազմում ե գյուղական խորհրդի՝ գավառակային բյուջեի մեջ մտնող յելեմտից նախահաշիվները.

բ. հաշիվ ե տալիս ընտրողներին ու գավառակալին գործադիր կոմիտեին գյուղական խորհրդին տրամադրյած միջոցները ծախսելու մասին.

գ. միջոցներ ե ձեռք առնում միասնական գյուղատնտեսական հարկը գանձելու համար.

դ. գավառակային գործադիր կոմիտեյի կարգադրությունը ստանալուց հետո կազմում ե գյուղատնտեսական հարկ վճարողների ցուցակներն ըստ գյուղերի.

ե. հարկի և հաշվառության յենթակա առարկաների թագնելու առաջն ե առնում.

զ. հետեւում ե, վոր միասնական գյուղատնտեսական հարկի վերաբերյալ արտոնություններն ի կատար ածվեն և միջնորդում ե գավառակային գործադիր կոմիտեյի առաջ այդպիսի արտոնությունների անհրաժեշտության մասին.

է. միջոցներ ե ձեռք առնում տուգանքները գանձելու համար, միասնական գյուղատնտեսական հարկը ժամանակին չվճարելու դեպքում.

լ. աջակցում ե արհեստահարկը գանձելուն.

թ. գավառակալին գործադիր կոմիտեյի հանձնարարությամբ գանձում ե ապառիկ մնացած հարկերն ու տուրքերը.

ժ. չի թույլ տալիս որենքով չսահմանված հարկերի ու տուրքերի գանձումը.

ժա. մասնակցում ե ապահովագրության գործակալների գնահատության աշխատանքներին, վորշում ե գյուղատնտեսության հասցրած վնասների չափը և աջակցում ե ապահովագրները ժողովելուն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գավառական գործադիր կոմիտեյի առաջարկությամբ խոշոր գյուղերի գյուղխորհուրդներին կենտրոնական ֆորմադիր կոմիտեն կարող ե բյուջեյի իրավունք վերապահել:

10. Զինվորական զործի վերաբերմամբ գյուղական խորհուրդը

ա. հաշվի յե առնում բոլոր զինապարտ բնակիչներին.

բ. հաշվի յե առնում ձիերը, սալերը, ձիասարքերը՝ այդ

մասին գոյություն ունեցող հատուկ որենքների ու կանոնների համաձայն.

գ. հսկում ե, վոր զինապարտ բնակիչները ճշտությամբ ներկայանան ստուգողական զորաժողովներին.

դ. աջակցում ե աշխատավորների ընդհանուր զինվորական ուսուցման վերաբերյալ բոլոր կարգադրությունների կատարմանը.

ե. տեղավորում ե անցնող զորամասերն ու շենքեր ե հատկացնում զինվորական հիմնարկությունների համար:

11. Աշխատանքի վերաբերմամբ գյուղական խորհուրդը

ա. իր գտնված վայրի սահմաններում հսկում ե, վոր ժամանակին ու ճշտությամբ կատարվեն աշխատանքի վերաբերյալ գոյություն ունեցող որենքներն ու իշխանության կենտրոնական մարմինների կարգադրությունները.

բ. աջակցում ե արհեստակցական կազմակերպությունների գործունեյությանը:

12. Կուլտուր-կրթական և առողջապահության զործի վերաբերմամբ գյուղական խորհուրդը

ա. միջոցներ ե ձեռք առնում դպրոցական և նախադպրոցական ցանցը զարգացնելու համար և նախավոր ոգնությունն ե ցույց տալիս դպրոցներին.

բ. գործադրում ե անգրագիտության դեմ պայքարելու միջոցները.

շ. կազմակերպում ե խրճիթ-ընթերցարաններ և գրադարաններ, միջոցներ ե ձեռք առնում ստանալու և տարածելու բնակչության մեջ լրագրներ, հանդեսներ, զրքեր, որինագրքեր և այլն, այլ և աջակցում ե գյուղական թղթակիցներին.

դ. կազմակերպում ե գյուղական բժշկա-սանիտարական հիմնարկություններ.

ե. իրազործում ե վարակիչ հիվանդությունները կանխելու և նրանց դեմ պայքար կազմակերպելու համար արված կարգադրությունները.

զ. հոգ ե տանում մայրության և մանկության պաշտպանություն կազմակերպելու մասին.

է. աջակցում ե գյուղական բնակչության ինքնագործունելության զարգացմանը՝ կուլտուր-կրթական և բժշկա-սանի-

տարական հիմնարկություններն անհրաժեշտ միջոցներով և նլութերով ապահովելու գործում.

ը. աջակցություն ե ցույց տալիս ուսուցչական և բժըշ կական աշխատանքներին, զեկուցումներ ե լսում կուլտուր կրթական և բժշկա սանիտարական հիմնարկությունների գործունելության մասին:

13. Սոցիալական ապահովության վերաբերմամբ գյուղական խորհուրդը

ա. ամեն կերպ աջակցում ե փոխադարձ ողնության գյուղացիական ընկերություններին և հսկում ե նրանց գործունելության վրա.

բ. գյություն ունեցող որենքների ու կանոնների համաձայն ողնում ե հաշմանդամներին, կարմիր զինվորների ընտանիքներին, ռազմաճակատում սպանվածների ընտանիքներին, զինվորական ծառայությունից ազատվածներին ու նրանց ընտանիքներին, այլ և աջակցում ե հաշմանդամների արտելներ կազմակերպելուն ու նրանց գործունելությանը:

III. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ.

14. Գավառակների գյուղական վայրերի գյուղական խորհուրդները կազմվում են այն հաշվով, վոր յուրաքանչյուր 50 բնակիչը տված լինի մի պատգամագոր, բայց վոր ընդհանուր առմամբ ունենա վոչ պակաս քան 7 և վոչ ավելի քան 50 պատգամագոր:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. 300.-ից պակաս բնակիչ ունեցող գյուղերը մասնակցում են հարեան գյուղի գյուղական խորհրդի ընտրությանը. վորոշ գեպքերում կառավարչության խնդիրները կարող են վճռվել ընտրողների ընդհանուր ժողովներում՝ համաձայն Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրության 44 հոդ. ծանոթ. 2:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 2. 50.-ից մինչև 100 բնակիչ ունեցող գյուղերի համար, այլ և այն գյուղերի, վոր հարեան գյուղի հետ միասին մի ընդհանուր խորհուրդ ունեն, նշանակում ե տվյալ գյուղի հետ կապ ունեցող գյուղական խորհրդի լիազոր, վոր անդամ ե հանդիսանում այն խորհրդի, վորին վերաբերում ե տվյալ գյուղը:

15. Գյուղական խորհուրդների ընտրության կարող են մասնակցել այն բոլոր քաղաքացիները, վորոնք ընդունական իրա-

վունքներ ունեն՝ Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրության համաձայն: Ընտրությունը տեղի է ունենում Հայաստանի կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հրահանգի հիման վրա:

16. Գյուղական խորհուրդներն ընտրվում են մի տարով:

17. Գյուղական խորհրդի նիստերը գումարվում են վորոշություր, վոչ պակաս քան յերկու շաբաթը մի անգամ:

18. Գյուղական խորհուրդների նիստերին խորհրդակցական ձայնով կարող են մասնակցել տեղական արհեստակցական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, գյուղական խորհրդի մեջ իրենց ներկայացուցիչները չունեցող գյուղերի լիազորները, կանանց պատգամավորական ժողովների ներկայացուցիչները, այլ և գյուղական պաշտոնատար անձինք (բժիշկները, ագրոնոմները, ուսուցիչները, հողաշինարարները, գյուղական կատարածուները և այլն):

19. Գյուղական խորհրդի գլուխն ե նախագահը, վորին ընտրում ե գյուղական խորհուրդը իր անդամներից:

20. 15.-ից ավելի անդամներ ունեցող գյուղխորհուրդները Հ. Ս. Խ. Հ. Կենտգործկոմի հրահանգի հիման վրա ընտրում են նախագահություն 3—5 անդամների կազմով:

21. Գյուղական խորհուրդների ֆինանսա-տնտեսական գործունելությունն ստուգելու համար խորհուրդների ընտրության հետ միաժամանակ ընտրվում ե վերաստուգիչ հանձնաժողով, վոր իր գործն ավարտում ե նոր խորհրդի ընտրությունից մի ամիս առաջ և գյուղական նախկին խորհրդի գործունելության մասին դեկուցանում ե բնակիչների ընդհանուր ժողովին:

IV. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՅԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՅՆՔՆԵՐՆ ՈՒ ՊՈՐՑԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

22. Գյուղական խորհուրդների նիստերի միջանկյալ ժամակաշրջանում խորհրդի նախագահը գործադրում է այն բոլոր գործնական միջոցները, վոր անհրաժեշտ են գյուղական խորհրդների վճիռները և իշխանության կենտրոնական ու տեղական մարմինների կարգադրությունները կատարելու համար, զական գեկուցանելով այդ մասին գյուղական խորհրդի առաջիկա նիստում:

23. Գյուղական խորհրդի անդամները, բացի իրենց խորհրդի մեջ ունեցած մշտական աշխատանքից, պարտավոր են մասնակցել գյուղական խորհրդի կազմած հանձնաժողովներին, այլ և կատարել գյուղական խորհրդի վորոշ հանձնարարությունները:

24. Անգործության, գեղծումների և իշխանազանցության, քնակչության հետ կոպիտ վարվելու համար, այլ և գյուղական ընդհանուր ժողովների միջնորդության հիման վրա՝ վերադաս մարմինների վորոշումներին չհնազանդելու և ճշտությամբ չկատարելու համար՝ գյուղական խորհրդի նախագահն ու անդամները գավառակային գործադիր կոմիտեյի վորոշմամբ և գավառային գործադիր կոմիտեյի հաստատությամբ կարող են հեռացվել իրենց պաշտոններից, անկախ քրեական հետապենդումից կամ կարգապահական պատասխանատվությունից:

25. Գյուղական խորհրդի նախագահն ու անդամներն իրավունք չունեն, առանց գյուղական խորհրդի և գավառային գործադիր կոմիտեյի գիտության և համաձայնության՝ թողնելու իրենց պաշտոններն ու գործը:

26. Գյուղական խորհրդի նախագահն ու անդամներն իրավունք ունեն մասնակցելու գյուղական խորհրդին յենթակա վայրում գործող հիմնարկությունների ու կազմակերպությունների նիստերին ու խորհրդակցություններին:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Հ. ՏԱՏՅԱՆ



ԳԻՒԾ 20 ԿՂՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0212170

39. 747